

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անհրաժեշտ է մշտական բարեփոխութիւն.—
Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յէմիսիդ. Նամակ
Ախալքալաքից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չինական գործերը. Արտաքին
լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱՍԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Միջազգային կոնգրէսները Պարիզում:

ԱՆՀՐԱՍԻՐ ԵՄԵՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒԹԻՒՆ

Հայկական թատրոնական ներկայացում
ների կենտրոնը առաջիկայ ձևաւայ ըն-
թացքում պէտք է լինի, վերջին տարի-
ների օրինակով. Բազմա քաղաքը: Հրաւիր-
ված են զերասաններ և կազմակերպված
է խումբ: Նույնով կը սկսվեն ներկայացում-
ները:

Նախընթաց տարիների ներկայացումները
տուեւ են որոշ փոքր, որով դիրանում է
թատրոնական գործի կազմակերպութիւնը
և զեկավարութիւնը: Այն, ինչ որ դժուար
էր սրանից երեք չորս տարի առաջ, այժմ
արդէն հարկվել և հեշտացել է: Թատրո-
նի զեկավարները ճանաչում են զերասան-
ները, որով և դիտեն նրանց առանձնայատ-
կութիւնները: Բարձրագոյն թատրոնական
պահանջները, ճանաչում են և թատ-
րոնի յաճախորդներին և գիտեն նրա ճաշա-
կը և պահանջները:

Սակայն թատրոնական գործի դուռն կանգ-
նածները պէտք է լաւ գիտենան, որ գրա-
ւել ժողովուրդը գէպի թատրոն կարելի է
մշտական կատարելագործութիւններ մշա-
ցնելով ներկայացումների մէջ և ընդարձա-
կելով ընդհանուրը: Որքան և զեկեցիկ
լինեն պիեսները և աճող նրանց կատարու-
մը, այնու ամենայնիւ նրանք մի որոշ ան-
գամ կրկնվելուց յետոյ ձանձրացնում են
յաճախորդներին և չեն առաջացնում այն
հետաքրքրութիւնը և այն բարոյական ար-
դիւնքը, որին նրանք ընդունակ էին առա-
ջին անգամները: Իսկ այդ հանգամանքի
վրա ընդ ուշադրութիւն է դարձրված այժմ:
Նախընթաց շարունակելով թատրոնական
գործը, կրկնելով նոյնը անփոփոխ կերպով,
անկարելի է: Միայն նորութիւն և թատր-

մութիւն մտցնելով ընդհանուր մէջ, նոր
և թարմ ոյժեր գրաւելով զերասանական
խմբի մէջ, կարելի է կայուն դարձնել
թատրոնը և փառ պահել ժողովրդի հետա-
քրքրութիւնը գէպի բնմը:

Բազմա քաղաքի գործը գտնվող մեր թատրոնա-
կան խմբերը այնքան թոյլ են և այնքան
անհոգ ու թեթեւ են վերաբերվում իրանց
գործին, որ միայն վնասում են թատրոնա-
կան գործի գաղափարին: Այնպիսի կենտրո-
նում, ինչպէս Թիֆլիսն է, մինչև այժմ
թատրոնական մանր-մունք ոյժերը չը կա-
րողացան ոգևորվել թատրոնի գաղափարի
մտքով և ամեն անգամ, երբ մտաբերում
են թատրոնը, միայն այն նպատակով, որ
կարողանան մի որ և է կերպով սաղացնել
մի ներկայացում և ստանալ որոշ գումար:
Արդեօք այս տարի բարեփոխութիւն կը
լինի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ֆ Ե Մ Ի Ն Ի Ջ Մ

V

Պարիզում նորերս կայացած կանանց համա-
ժողովի առիթով, որ երկրորդն է ցուցահանդէ-
սի ընթացքում, «Россия» լրագիրը տպել է մի
առաջնորդող («Մեր կանանց մեղքը» վերնա-
գրով), որ հետաքրքիր գաղափարներ է
պարունակում իր մէջ:

Շեշտելով այն հանգամանքը, որ կանանց
համաժողովը, իբր քաղաքական ցուցահանդէսի
ընթացքում կայացած բոլոր համաժողովների
մէջ, չափ լուրջ ընտանքութիւն էր կրում, ուս-
տալով իրեն ասում է. «Համաժողովը քուէտրված
վճիռները առաջարկվելու են բոլոր քաղաքա-
կիրթ երկրների կառավարութիւնների ուշա-
դրութեան, և բոլոր քաղաքակիրթ երկրնե-
րում կանանց իրաւունքների պաշտպան ընկե-
րութիւնները աշխատելու են, որ Պարիզի հա-
մաժողովի վճիռների վրա հարկ եղած ուշա-
դրութիւնը դարձնեն տեղական զեկավար չըը-
ջանքներ: Մեզնում, կարծեօք, ոչ մի ընկերու-
թիւն չէ կարող ստանձնել այդպիսի միտքա-
այն պարզ պատճառով, որ մեզնում չը կայ ոչ
մի ընկերութիւն, որ նպատակ ունենար կոխ-
մղել կոնդ քաղաքացիական հաւատարմաւո-

թեան համար: Շատերը, ի հարկէ, տրամադի-
ր են ծիծաղել այդպիսի ընկերութիւնների վրա,
բայց այդ առաջանում է նրանից, որ լաւ ծա-
նօթ չեն նրանց գործունէութեան հետ: Անգ-
լիայում այդ ընկերութիւնները վերջին 10
տարվայ ընթացքում կանանց համար այնպիսի
իրաւունքներ են ձեռք բերել, որոնց մասին
չէր կարելի երազել նոյն իսկ 25 տարի արանից
առաջ: Անգլիայի և Ռուսաստանի մէջ մեծ
տարբերութիւն կայ ի հարկէ, բայց այնտեղ էլ
կանանց ընկերութիւնների գործունէութիւնը
հանդիպել է միշտ բողոքների և վերին աստի-
ճանի անտարբերութեան զեկավար չըջանքների
կողմից: Սակայն եռանդը և տոկոսնութիւնը
պատկիւն են փայլուն հետեւանքներով: Թող
նրանք մեզնում պատկիւն աւելի պակաս հե-
տեւանքներով, բայց հօ չէ կարելի նստել ձեռ-
ները խաչած և յոյս դնել ճակատագրի վրա:
Չէ որ կանանց իրաւունքները սահմանափակող
քաղաքակիր շահապետական օրէնքներ մեզնում
գոյութիւն ունեն միայն չորսիւս այն հանգա-
մանքի, որ մեզնում չը կայ ոչ մի կազմակերպ-
ված ընկերութիւն, որ ձգտէր բարեփոխել տալ
այդ օրէնքները:

Այնուհետեւ լրագիրը այն միտքն է յայտ-
նում, թէ այժմ ուս կանայք պէտք է աւելի
քան երբ և իցէ ուշադրութիւն դարձնեն այդ
օրէնքների վրա, որովհետեւ շուտով վերջնա-
լու է քաղաքացիական օրէնագրքի խմբագրու-
թիւնը:

«Մեր կանանց»,—չարունակում է լրագիրը,—
ըստ երեւոյթի ամենալին չէ հետաքրքրում
այդ հարցը... Բոլորովին ուրիշ կերպ էին պա-
հում իրանց նոյն իսկ զերմանութիւնը համա-
կայսերական քաղաքացիական օրէնագրքի խմբ-
ագրութեան ժամանակ: Նրանք եռանդուն
կոխ էին մղում նահապետական օրէնքների
դէմ և իրաւաբանների դէմ, որոնք առհասարակ
կանանց ազատագրութեան երկրպագուներ չէին:
Մեր կանայք նոյնպէս չեն կարող առանձին
յոյսեր դնել նոր քաղաքացիական օրէնագրքը
խմբագրող իրաւաբանների վրա: Առանց զօրեղ
ներգործութեան մամուլի և հասարակութեան
կողմից, նրանք հաղթ թէ համաձայնի գրկել
աղաքագրութեան այն ընդարձակ իրաւունքներից,
որ, մեր օրէնքների համաձայն, նա վայելում է
կոնդ վերաբերմամբ:

պանախորդի փոխ-նախագահ և անցիակ տա-
րի Բրիւսելում գումարված խաղաղութեան Ծ-րդ
կոնգրէսի նախագահ) կարգում է այն ուղեր-
ձը, որ կոնֆերենցիայի օտարազգի անդամները
ներկայացնում են փրանսիական հանրապետու-
թեան նախագահին:

Այդ օրը, երկուշաբթի դէմ, լրագիրները
թայտնեցին, որ երկրորդ օրը, օգոստոսի 3-ին,
երրորդ նիստը աղմկալից է լինելու, որովհետեւ
մի քանի պատգամաւորներ որոշել են անպատ-
ճառ հանել կոնգրէսը պաշտօնական վիճակից
և քննութեան ենթարկել բոէրների հարցը:
Ամենքը տենդոտ անհամբերութեամբ սպասում
են միւս օրվայ նիստին:

Օգոստոսի 3-ին, Լուքսեմբուրգի պալատում,
առաւօտեան, մեծ շարժում և իրարանցում
կայ. կոնգրէսականների և ունկնդիրների խումբ
բաղմութեան լցված է դահլիճում: Առանց
բօէրական հարցի էլ՝ օրակարգը ինքն ըստ
ինքեան արդէն շատ նշանաւոր է—վիճաբանու-
թիւն Հաագայի կոնֆերենցիայի արդիւնքների:

Բայց նախագահ Ֆալլէր բացակայ է. դիտ-
մամբ, թէ պատճառմամբ նա չէ եկել: Նախագա-
հական աթոռը առաջարկվում է պ. Բերնէրտին,
բելգիական պատգամաւորին:

Նախագահողը յայտնում է, որ այսօրվայ օ-
րակարգն է՝ Հաագայի խաղաղութեան կոնֆե-
րենցիայի որոշումների գործնական գործադրու-
թեան հարցի քննութիւնը: Եւ որովհետեւ
ինքը, պ. Բերնէրտը, իբրեւ այդ կոնֆերենցիայի
փոխ-նախագահ, այդ հարցի զեկուցանողն է,
ուստի թողնում է նախագահական աթոռը,
առաջարկելով նախագահութիւնը կոմս Ալպո-
նին, և և բարձրանում է ամբիօն: Իր վերին
աստիճանի հետաքրքիր զեկուցադրի մէջ

Այն կարծիքը յայտնելով, թէ նոր օրէնագի-
քը խմբագրող իրաւաբանները կը մեղացնեն
կանանց իրաւունքները սահմանափակող օրէնք-
ների ոճը միայն, առանց ձեռք տալու նրանց
էութեան, լրագիրը վերջացնում է. «Յանցան-
քի ամբողջ ծանրութիւնը կրկնի մեր բարձր
և միջին դասերի կանանց վրա, որոնք ան-
տարբեր են մնում իրանց շահերին այնքան մօ-
տիկ գործի վերաբերմամբ, ինչպէս է կանանց
իրաւունքները որոշող քաղաքացիական օրէնք-
ների վերաբերմամբ: Երբ նոր օրէնագրքը
վերջացած կը լինի և կը հաստատվի, այն ժամա-
նակ արդէն ուշ կը լինի ձայն բարձրացնելու
հարկէ, ժաքատուժ յանուն կանանց իրաւունք-
ների այն ժամանակ էլ աւելորդ չի լինի, բայց
կանայք ձեռքից թողած կը լինեն յարմար փո-
պէն այդ մաքառման համար: Հաւատացէ՛ք,
ժանր մեղք են վերցնում իրանց հոգու վրա
կանայք, չը մտածելով ապագայ սերունդների
և պատմութեան առաջ ունեցած պատասխա-
նատուութեան մասին:

Մենք, ըստ էութեան, նոյնն էինք ասել
հայ կանանց վերաբերմամբ այս յօդուածներից
առաջինում և այժմ միայն ձայնակցել կարող
ենք ուս լրագրի խմբագրութեան համակրելի
կոչին:

ՆԱՄԱԿ ԱՆՍԼՔԱՆԱԿԻՑ

Սեպտեմբերի 8-ին

Հացի բզէզից և հօտենտօտեան մոլուկից ա-
ռաջացած նոր աղէտից վնասված գիւղերին
օգնութիւն հասցնելու գործը կազմակերպում
է: Գիւղատնտես Ա. Սահակեան՝ բացի երկրա-
գործութեան միջնորդի լրագրին տուած իր
զեկուցումից՝ ներկայացել է Թիֆլիսի նահանգ-
գապետի պաշտօնակատարին և մանրամասն
զեկուցել է աղէտի ծաւալի և անհրաժեշտ ու
չուտափոյթ օգնութեան մասին: Նահանգապե-
տը կարգադրել է, որ՝ երկրաշարժից վնասված
ներին օգնելու համար այստեղ գործութիւն ու-
նեցող կոմիտէն հոգայ և այս նոր աղէտից
վնասվածներին օգնելու մասին: Բացի դրանից՝
աղբօսմ Սահակեան կրկին եկել է մեր քաղա-
քը՝ իր հետ սահնակով պ. նահանգապետի
յատկապէս այդ նպատակով նշանակած պ. Բա-
րանովսկուն, որը գիւղական գործերին վերա-

Երբ նախագահ Ալպոնին հարցնում է, թէ
ո՞վ է կամենում խօսել, առաջ է գալիս բելգիա-
կան արմատական պատգամաւոր Լօրան և
թնդալից ձայնով սկսում է մի ճառ, որը, հէնց
առաջին խօսքերից ընդունվում է որոտնդոտ
ծափահարութիւններով: Նախագահը ընդմիջում
է մի քանի անգամ այդ ճառը, ինչորովով ճա-
ռախօսին դուրս չը գալ կանոնադրութեան
սահմաններից և չը քննել կոնգրէսին մաս-
նակցող այս կամ այն պետութեան քաղաքա-
կանութիւնը: Այդ բուն ծափահարութիւնների
և ընդմիջումների պատճառն այն է, որ Լօրան
արձարծում է Տրանսիլուպի հրատապ խնդրու-
նա խտրութեան քննադատում է այն բուն չօ-
վինիզմը, որի բնկումն Անգլիայում քաջ տուեց
մեծ և ազատամիտ ազգին և ստիպել նրան
մի անարդար կոխ մղել տկարների դէմ, կոխ,
որի դէմ վրդովված է քաղաքակիրթ ազգերի
խղճմանը:

Նախագահ Ալպոնին նորից նկատում է, թէ
ճառախօսը շատ վտանգաւոր հոգի վրա է կանգ-
նած և թէ նրա խօսքերը կարող են զգալի
կերպով թուլացնել միջապարաւմենական կօն-
գրէսի աշխատութիւնների արդիւնքը: Սակայն
Լօրան առաջարկում է կօնգրէսի քուէարկու-
թեան հետեւել բանաձեւը, յայտնելով, որ այդ
բանաձեւը մշակել է բելգիական պատգամաւոր
Հուգօի, սպանիական պատգամաւոր Լըզուէյի,
յայտնի Տրարիէի, գերմանական րալիստագի
անդամ Հիլդի և Հոլլանդիայի ներքին գոր-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍՆԵՐԸ ՊԱՐԻԶՈՒՄ

Խ ա զ ա ղ ու թ ե ա ն և ի ռ աւ ա ր ա ռ ու թ ե ա ն
մ ի ջ ա պ ա ռ ա մ է ն ա տ ա կ ա ն կ օ ն դ ը է ս

Երկրորդ ընդհանուր ժողովը կայացաւ օգոս-
տոսի 2-ին:

Շարլ Բէօքէի մի ճառ խօսեց ֆրանսիական
մամուլի կազմակերպութեան մասին, լի յար-
ձակումներով: Այդ ճառը յարուցեց բուն բու-
ղը, ժանաւանդ Լէօն Բուրժուայի կողմից:
հեռագնաց խօսեցին՝ ունգարական պատգամա-
ւոր Ֆրեդերիկ Պասսի, Իվ Գիւլօ, Ստանիօպ
անգլիացի և այլ ճանապարհորդներ: Բէօքէի
յարձակումները ֆրանսիական մամուլը գէմ
կապ ունէին կոմս Ալպոնիի առաջարկութեան
հետ, որը, քուէարկվելով, ստացաւ հետեւեալ
որոշումը. «Միջապարաւմենական Միութիւնը
պարտաւորութիւն է դնում իր խմբերի վրա
ստանձնել իրանց երկիրներում նախաձեռնու-
թիւն՝ կազմել մամուլի խմբեր խաղաղութեան
և իրաւարարութեան կազմակերպութիւն
ստեղծելու համար, համաձայն այն գաղափարի,
որ ամբողջված է ունգարական մամուլի ստեղ-
ծած ժամանակաւոր կանօնների մէջ: Նա յանձ-
նում է միջապարաւմենական խորհրդին յարա-
բերութեան մէջ մանկ մամուլի միութեան ժա-
մանակաւոր խորհրդի հետ, հէնց որ սա կը
կազմակերպվի, որպէս զի պատրաստվեն երկու
միութիւնների մէջ մշտական յարաբերու-
թիւններ:

բերեալ նախնական ատենի (Губернское по крестьянским делам присутствіе) անդամ է:

Տեղական կոմիտէն երկու նիստ ունեցաւ, մասնակցութեամբ պ. պ. Բարանովսկու և Սահակեանի և համաձայն վերջինիս զեկուցման՝ որոշեց հետեւեալը. անհրաժեշտ է ամենից շատ վնասված 24 գիւղերի հողերի մի երրորդ մասը յատկացնել աշխատանքի և հէնց հիմա մտածել գիւղիկի անունով յայտնի հատիկից սերմացու և առնասարակ ուտելու հաց ճարելու մասին: Որովհետեւ գիւղացիներ արդէն ծախել և կերել է, ինչ որ միայն կարելի էր ծախել, և այլ ևս ոչ մի միջոց չունի իր թրջուտը գոյութիւնը շարունակելու, իսկ դրսի ենթադրական օգնութիւնը կարող է շատ ուշանալ, ուստի կոմիտէն որոշել է խորհուրդ տալ գիւղացիներին, որ սրանք համախօսական վճիռներով դիմեն ուր հարկն է, և թոյլտուութիւն խնդրեն, որ մեր գաւառի գիւղատնտեսական դրամագլխի ընդհանուր գումարից (250 հազար ռուբլուց աւելի) այդ 24 գիւղերին հասնող մօտ 60,000 ռուբլին փոխարինաբար գործադրվի սերմացու և ուտելու հաց առնելու այն պայմանով, որ այդ գումարը հինգ տարվայ ընթացքում վերադարձնվի, որովհետեւ այդ դրամագլխին ունի իր յատուկ, մեքորատիվ, նպատակը: Այդքան գումարը հազիւ կարող է բաւականապէս սերմացու և միայն մի ամսվայ պաշար ձեռք բերելու համար: Նախապէս մանրամասն որոշված է, թէ առնելու մի գիւղի հողերից քանի փոխառութիւն յատկացրած աշխատանքի, քանի պուղ և որքան արծողութեամբ սերմացու կամ մի ամսվայ ուտելու հացահատիկ է պէտք:

Գիւղերից եկած ներկայացուցիչները, ընդունելով կոմիտէի որոշումը և զանգեցին, զանգեցին՝ կոմիտէի մշակած նախաձեռնութեան համաձայն կազմած համախօսական վճիռներով փոխառութիւն խնդրել, ամեն մի գիւղ իր պահեստի գումարից: Որովհետեւ մի քանի գիւղերի պահանջը շատ է իրանց ունեցած պահեստի գումարներից, այդ պատճառով կոմիտէն որոշել է թոյլտուութիւն խնդրել փոխառութիւն անելու երկրաշարժից վնասվածների համար հանգանակված և մինչև այժմ դեռ չը գործադրված գումարներից, որպէս զի այդ պահանջները լրացնելու՝ Սերմացու և ուտելու հաց առնելու համար կոմիտէն նշանակեց իր անդամներից պ. Թ. Մերկելեանին և առաջարկեց, որ այդ 24 գիւղերից ամեն մէկը մի կամ երկու ներկայացուցիչներ ընտրէ, որ պ. Մերկելեանին հետ միասին հարկաւոր հացահատիկը գնեն: Որոշված է սերմացու և այլ հացահատիկ գնելու Ախալքալաքի գաւառի չը վնասված մասերում, Ախալցխայի, Արդահանի գաւառներում և այլ տեղերում:

Ինչպէս տեսնում էք, 24 քաղցած գիւղերի սկզբնական օգնութեան գործը ապահովված

ծերի մինստը վան-Հալթէնի աշխատակցութեամբ:

Անա այդ բանաձեւը.

«Միջազգային իրաւարարութեան միջազգայնական միութեան տասներորդ կոնֆերանսին, որում մասնակցեցին նկատողութեան անունով Հասագլխի որոշումները:

Մատուցանում է իր խախտողութեան արտաբերությունը բոլոր նրանց, որոնք նպատակ են ապրելու հետեւեցնելին: Հաստատ լինի, որ պետութիւնները այլ ևս զանց չեն առնի ապագայում գործադրել իրանց տրամադրութեան տակ զրկված միջոցները միջազգային վճիռը խաղաղացնելու համար և ամբողջում է, որ չը կարողացաւ գործադրել այդ միջոցները ներկայ վճիռի ժամանակ մեքորիկ և հարաւափրիկեան հանրապետութիւնների մէջ:

Հարկում է իր բաղկացուցիչ մասերի՝ խմբերի ուղարկութիւնը այն պարտաւորութեան վրայ, որ յանձնված է իրանց լիզեցնելու իրանց կառավարութիւններին այն պարտաւորութիւնները, որ պետութիւնները ստանձնել են իրանց հաստատութիւնը տալով Հասագլխի կոնֆերանսին որոշումներին:

Առաջարկելով այս բանաձեւը, Լորան ասում է.

«Այս կոնգրէսը, որ բաղկացած է ընտրված և հասարակական կարծիքի բնական օրգան կազմող պատգամաւորներին, չէ կարող իրական ոյժ դառնալ, եթէ այդ հասարակական կարծիքի արձագանքը չը մնայ: արդ, հասարակական կարծիքն անկարող կը լինի ըմբռնել, որ արբիտրաժի համար կազմված մի կոնֆերանսի կառուցել լինի գումարվել Հասագլխի կոնֆերանսին: Երկրորդ օրը, առանց արտաբերությունից Եւրոպայի յանդիմանութիւնը նրա համար, որ արբիտրաժը մերժվեց և պետութիւնների կողմից չեղաւ միջնորդութեան որ և է առաջարկ ի նպատակ երկու ազգերի, որոնք հետաքրքար կուտան և իրանց անկախութեան

է. բայց չէ որ մի ամսից յետոյ գիւղացին կրկին հաց պիտի ուզէ, որ եթէ չուտով չը հասցնվի, սովը և նրանից առաջացած հիւանդութիւնները, իրանց բոլոր արհաւիրքներով, կը տարածվեն մօտ 20 հազար գծադր գիւղացիների մէջ և օգնութեան գործը տասնապատիկ կը դժուարանայ: Եթ որ գաւառացիների համար էլ սերմացու է պէտք այդ գիւղերին, չէ որ բացի այդ 24 գիւղերից՝ կան ևս ուրիշ 21, աւելի նուազ վնասված, գիւղեր, որոնք նոյնպէս կարող են օգնութեան կոմիտէն որոշել է, որ խիստ վնասված և հացից բոլորովին զուրկ առնելու մի գիւղացուն, մեծ թէ փոքր, միջին թրջուտով առնուաղը հարկաւոր կը լինի 10 պուղ հացահատիկ մինչև յաջորդ տարվայ հունձը: Անա մարդագլուխ այդ 10 պուղ հացի, գաւառն սերմացուի, միւս գիւղերին մասնաւոր օգնութեան հասցնելու մասին պէտք է մտածեն կառավարութիւնը, մասուրը, հասարակութիւնը և ամեն մի ձեռնհաս մարդ: Ինչպէս ասացինք, գիւղացին այլ ևս ոչինչ չունի ծախելու: Նորից փոխառութիւն անելու պահեստի դրամագլխից թոյլ չի տրվի, քանի որ նոյն դրամագլխից անցաւ տարի էլ փոխառութիւն է եղել և այս վերջին փոխառութեամբ վնասված գիւղերի դրամագլուխը համարեա վերջնական է: Բացի դրանից՝ յանկալի էլ չէ, որ գիւղացին փոխառութիւններով խիստ ծանրաբեռնվի և ընթացիկ քաղցալ է իր անտեսութիւնը: Ուրեմն առանց դրսի օգնութեան անկարելի կը լինի իր ձանկերից խուսափել և մեծ քանակութեամբ զոհեր չը տալ: Տեսնե՛ք, մեր հարուստները քանակների բերանները կը բանան, և մեր երկու սեռի ինտելիգենտ երիտասարդութիւնը օրինակ կանոն ուս ինտելիգենտից, որ նման դէպքերում այնքան անձնութիւններ է ցոյց տալիս, և օգնութեան կը հասնէ իր զորութեան երբօրեայ, որ մեր հասարակութեան հիմքն է կազմում...»

Սովի նշաններ արդէն երեւցել են. Գիւմրի-Գիւղի գիւղից մէկը, տեսնելով, որ ոչ մի ճար չունի իր քաղցած երեխաներին կերակրելու, ուղում է կախվելով խնդրել, բայց վրա են հասնում, թող կորում և ազատում մահից: Պատահել են ևս մի քանի ուրիշ ինքնասպանութեան փորձեր: Իսկ մէկը Չանդուրա գիւղից քաղցած երեխաների պատճառով մշտից ցնորվել է. և ոչ գիտէ, թէ ինչից պիտի պատահեն, եթէ իր ժամանակին օգնութիւն չը լինի:

Մոռացա՛յ ասել, որ աղբոսում Սահակեանը բացատրում էր թէ հողագործ գիւղացիներին անմիջապէս և թէ տեղական ինտելիգենտ գիւղացի կամ քաղաքացի երիտասարդներին այդ վնասակար միջոցների դէմ կուտու, նրանց ոչնչացնելու եղանակը:

Վերջին երկու գիւղերը խիստ ցրտեր եղան մեր գաւառում: Այդ ցրտերն ու եղեմը խիստ մրտադրին և վնասեցին սար գիւղերի գեղեցիկ

համար և զոհ են ոյժի ամենամանրածան և չար գործադրութեան, զոհ են ամենամանրագար և զգուշի պատերազմի (Վերմ ծափահարութիւնները):

Նախագահը նորից միջամտում է, ասելով, որ չը պէտք է զբաղվել ասեղան խնդիրներով, ոչ էլ գնահատել կառավարութիւնների գործողութիւնները:

Պ. Լորան.—Շատ լաւ. բայց չէ որ Հասագլխի կոնգրէսը և նրա արդիւնքները նոյնպէս առկա խնդիր են և ասելով ենթադրված են այսօր մեր քննութեան ու հասարակութեան համար այդ կոնֆերանսիայի ամենապարզ հետեւեանքն այն է, որ փոխանակ աշխարհին խաղաղութիւն տալու, այսօր ամենից շատ են խօսում պատերազմի մասին և այնքան զգուշ լի կոտորածներ են տեսնվում: (Մափահարութիւններ):

—Ես ասում եմ, որ քաղաքակրթ աշխարհի պարտականութիւնն էր միջամտել, բայց այդ պարտականութիւնը ոչ մի երկիր չը կատարեց, մինչ Եւրոպայի միջառն միջամտութիւնը կարող էր փրկել աֆրիկեան հանրապետութիւնները, որոնք պաշտպանում էին իրանց իրաւունքները և հայտնում էին իրաւարարութիւն (ծափահարութիւններ): Եւ եթէ ասում են, որ այդ անկարելի էր, որովհետեւ աֆրիկեան հանրապետութիւնները ներկայացուցիչ չունէին Հասագլխում, և կը պատասխանեմ, որ այդ անկարելի ծանրացնում է Անգլիայի մեղքը, որովհետեւ այդ ցոյց է տալիս կանխաձեռնութիւնը, այդ ցոյց է տալիս, որ պիտի մարդ նա հակառակեց նրանց ընդունելութեան Հասագլխում, որպէս զի կարողանայ յետոյ խեղդել նրանց: (Նոր ծափահարութիւններ և նոր միջամտութիւն՝ նախագահի կողմից):

արտերին, որոնք՝ միջամտեցին ազատ լինելով առաւ հունձ էին խոստանում: Այդ նոր գծադրութեան մասին պ. Սահակեանը հետադրով յայտնեց երկրագործութեան մինստի ու լրագործին:

Սալիւսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, առաւօտեան ժամը 10-ին, երկաթուղու գնացքով Թիֆլիս ժամանեց Կովկասի պ. Կառավարչապետ իշխան Փոլոքին:

Ախալքալաքի գաւառի այն գիւղերի վերաբերութեամբ, որոնք վնասվել են միջամտեցից, կայացաւ մասնագէտների մի խորհրդակցութիւն երկրագործութեան մինստի գիւղատնտեսական մէջ: Սորհրդակցութիւնը եկաւ հետեւեալ կարակացութեան. 1) գաւառացիները ցորենը և գարին համարել ենթակալ միջամտեցի աւերումներին և չը չանել առաջիկայ գարնան. 2) աշխատանքը համարել աւելի դժուարելու և ցանելու համար աւելի պիտանալու. 3) խոզանները կրակ տալ, որով միջամտեցի կը փչանան և հողը կը դառնայ պարարտ. 4) խորհուրդ տալ, որ աշխատանքը ցանել կրակ տուած խոզանների վրա և 5) շարունակել միջամտեցի ուսումնասիրութեան գործը:

Թիֆլիսի քաղաքացիները դուռն են փակել նիստում, որ տեղի ունեցաւ երկուշաբթի, սեպտեմբերի 11-ին, լսելով քաղաքացիների զեկուցումը հանգուցեալ իշխան Սահակեանի, իրեն քաղաքի նախկին ձայնաւորի օգտակար գործունէութեան մասին, յարգեց հանգուցեալի յիշատակը օտքի կանգնելով: Նոյն նիստում դուռն քննեց հանգուցեալ Ն. Ջուրալովի թոգնած գումարի գործադրութեան գիւղացում: Այդ գումարը հասնում է 284,000 ռուբլու և նշանակված է անկարների համար ապաստան հիմնելու: Դուռն յանձնեց յատուկ յանձնաժողովին մշակել ապաստանի նախահաշիւը և ներկայացնել դուռնային:

Վերջին ժամանակները, մայրաքաղաքի լրագրիչների խօսքով, միջնակարգ դպրոցները սկսեցին առանձին ուղարկութիւն դարձնել աշակերտների մաքրութեան վրա: Ճանկանալով այդ կողմից բարի նախանձ գործելիքն աշակերտների մէջ, Պետերբուրգի 6-րդ կլասիքական գիմնազիայի մանկավարժական ժողովը առանձին պրէմիաներ նշանակեց մաքրութեան համար: Այդ պրէմիաները տրվում են միայն չորս ստորին դասարանների աշակերտներին:

«Daily News» լրագրի թղթակիցը Բերլինից հաղորդում է, որ այստեղ ստացված տեղեկութիւնների համեմատ, ուսմանը նախագծում են երկրորդ երկաթուղու կառուցումը Ռու-

սից, որ հրաւիրում է ճառախօսին թողնել այդ հողը:

—Շատ լաւ, կը թողնեմ. և ասացի, ինչ որ կամենում էի ասել: Ես հասկանում եմ բարձր պատշաճութեան այն պատճառները, որոնք ստիպում են ձեռք միջամտել, պարեն նախագահ, բայց մենք կոնֆերանսիայի տակ անհրաժեշտ, պատասխանատու լինելով միայն մեր խղճմտանքի առաջ, մենք պարտաւոր էմք ասել յատեղ այն, ինչ որ ամբողջ աշխարհը մտածում է այն տխուր տեսարանի մասին, որով Անգլիան, Սորբոված չօվինիզմով, Անգլիան, որ այնքան գործել է Գլադստոնի հետ խաղաղութեան համար, Անգլիան, որի վրա ոչ ոք այնքան չէր հիմնում, ինչպէս ևս, պատկուհի է այն դատը, որ Հասագլխի կոնֆերանսիան պէտք է փակէ խաղաղութեան ապօրթէօզով (միահամուռ ծափահարութիւններ):

Ատենաբանը վերջացնում է իր ճառը ջերմագին յարգանք մատուցանելով անգլիական ներկայ պարտաւորաւորներին, որոնք կատարել են իրանց պարտականութիւնը և փորձել արգելել այն ոճիւրը, որ երկիրը պարտաւորում էր գործելու և հրաւիրում է ժողովը թուարկել իր բանաձեւը, իսկ իւրաքանչիւր անհրաժեշտ հակ իրանց պարտաւորանքներ, որ այդպիսի իրողութիւններ այլ ևս չը կրկնվեն: Երբ ծափահարութիւնները դադարում են, խօսք է խնդրում անգլիական պատգամաւոր Ստանօֆ. Նա շնորհակալութիւն է յայտնում ժողովի նախագահին և զի բարեկամ պ. Լորանին այն մեծարանքի համար, որ մատուցեց խաղաղութեան բարեկամներին: Անգլիան յուսում ունի, որ նման գործ էին զբիւրոսը իրանց ջանքը յետ կանանցնելու: Երկիրը պատերազմից, կամենալով, ընդհանրապէս,

սաստանդի դէպի Պարսկաստան. արդէն հետախուզութիւններ են կատարում ուս ինժեներները: Երկաթուղական նոր գիծը կերթայ Բագուից Լէնքորանի և Աստարայի վրայով դէպի Էնզելի, իսկ այնտեղից—Բաշտի և Թէհրանի վրայով: Առաջին ուս-պարսկական երկաթուղին, որի կառուցումը սկսվեց կէս տարի առաջ, Ալեքսանդրապոլից Երևանի և Նախիջևանի վրայով գնում է դէպի Թուրքի:

Մայրաքաղաքի լրագրիչները հաղորդում են, որ Պետերբուրգի նախնական դատարանում, երդուեալների մասնակցութեամբ, կը քննվի դատաւարական պրակտիկայի մէջ մի չը պատահած գործ, որը մեծ հետաքրքրութիւն է առաջացրել իրաւաբանական աշխարհում: Օրինորդ Ե. Բ.-ին հիպոտեզով ենթարկեց իր ընկերուհին: Գանվելով ներշնչման ազդեցութեան տակ, նա գնաց իրան անձնօթ անձանց մի շրջան, ուր նրան բռնաբարեցին: Այդ անձանց տմարդի և զգուշի արարմունքից յետոյ զարթնելով, թշուառ ազնիվը գնաց Պետերբուրգի նախնական դատարանի պրօկուրօրի մօտ և մանրամասնաբար պատմեց բոլոր անցքը: Պրօկուրօրը պատշաճաւոր ընթացք տուեց այդ գործին, և այժմ դատի են ենթարկված չորս անձինք: Վերջինից դէպքը առաջինն է մի քրէական ժամանակագրութեան մէջ:

«Свѣд. Курьеръ» լրագիրը հաղորդում է, թէ ուսումնարանական շրջաններից մէկում հարց զարթեց. թէ արդեօք կարելի է ուսումնարանական շինութիւնները տալ բարեգործական նպատակներով արվող այնպիսի երեկոյթների և կոնցերտների համար, որոնք վճարովի են: Ժողովրդական լուստորութեան մինստրութիւնը այդ բանը ցանկալի չը համարեց, և այդ պատճառով քաղաքից, թէ ուսումնարանական շինութիւնների տալը կոնցերտների և երեկոյթների համար արգելվում է:

Ռուսաց սինօդը—ինչպէս հաղորդում է «իվերիա» լրագիրը—հաստատել է ուղարկել է Թիֆլիսի ուսաց հոգեւոր սեմինարիայի նոր շինութեան յատակապիծը, որ պէտք է շինվի Վերայում և կարժենայ 260 հազար ռուբլի: Այս գումարը փոխարինաբար սինօդը տալիս է սեմինարիային այն պայմանով, որ հոգեւոր կառավարութիւնը այս պարտքը վճարէ այն գումարից, որը կը ստացվի սեմինարիայի հին շինութիւնը ծախելուց յետոյ:

Փինլանդական կայսերական սենատը,—ինչպէս հաղորդում է «Ֆինլ» լրագիրը,—հիմնեց ուսաց լեզուի դատաւարութեան կուրսեր կառավարչական հիմնարկութիւնների պաշտօնեաների և ծառայողների համար:

Մոյնել նրան իրաւարարութեան շաղի մէջ, Բայց մենք աղողութիւն չունեցանք և ստիպվեցանք խոնարհվել ճակատագրի առաջ:

«Սակայն եթէ—չարունակեց պ. Ստանօֆ—խաղաղութեան միջազգային կոնֆերանսին պէտք է իր իրաւունքներից այն կողմն անցնի, թուեալով յանգումը վնասելու: Երբ անցնի, անգլիական խոսքը իրան կը տեսնի տխուր անհրաժեշտութեան մէջ թողնել նիստը և խնդրում եմ զանազան ազդեցութեան ներքի յարգելի պաշտօնակիցներին, որոնք համախառնված են այստեղ միաբանութեան մի և նոյն հողով, խնայել մեզ այդպիսի մի սաստիկ վշտից»:

Ժողովը ծափահարում է ատենաբանին, շարժված նրա զգացված խօսքերից:

Ապա պ. Բերլինը առաջարկում է մի թեթեւ բարեփոխութիւն մոյնել բանաձեւի խմբադրութեան մէջ, դուրս հանելով մի քանի խօսքեր, որոնք կարող են վերաբերել Անգլիայի արժանապատուութիւնը: Պ. Լորան համաձայնում է և բանաձեւը միաձայն և միահամուռ ծափահարութիւններով ընդունվում է, ի հարկէ: ձեռնպահութեամբ անգլիական պատգամաւորներին:

Կոնգրէսի քուէարկութիւնը, պէտք է ասենք, նշանաւոր է նրանով, որ առաջին անգամ պաշտօնական Եւրոպան իր կարծիքը յայտնեց Տեսնվալով պատերազմի մասին:

Փափանհիստը կայացաւ, օգոստոսի 4-ին, և կոնգրէսը զբաղվեց ձեւակերպելով միայն իր նախկին որոշումներն ու զանազան վարչական տնօրէնութիւններ անելով:

Հ. Առաքելեանց

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.